



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
24.05.2013 թ. (արձանագրություն № 13)

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2013

1. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

ՀԱԱՀ մասնագիտությունների ուսումնական պլաններում ներառված բոլոր առարկաների համար ծրագրի նախագծման միասնական ուղեցույցը նախատեսված է առարկայական ուսումնական ծրագրի կազմման համար:

Առարկայական ուսումնական ծրագրի կառուցվածքը ներառում է առարկայի նպատակը, խնդիրները և բովանդակությունը, որը պետք է համապատասխանի մասնագիտությունների ուսումնական պլաններին և պետական կրթական չափորոշիչներին:

Առարկայական ուսումնական ծրագրի մշակելիս և կազմելիս անհրաժեշտ է դրանում հստակ արտացոլել հետևյալ կետերը.

1. առարկայի նպատակը և խնդիրները,
2. առարկայի տեղն ու դերը տվյալ մասնագիտությամբ ուսուցումը կազմակերպելու գործընթացում,
3. առարկայի տրամաբանական և բովանդակային փոխկապակցվածությունը այլ դասընթացների հետ,
4. դասընթացի յուրացման արդյունքներին ներկայացվող պահանջները,
5. դասընթացի ծավալը և ուսումնական աշխատանքների տեսակները,
6. լաբորատոր աշխատանքների թեմաները,
7. կուրսային նախագծերի հաստատված թեմաները
8. դասընթացի անցնակցման ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովվածությունը,
9. առարկայի դասավանդման նյութատեխնիկական ապահովվածությունը,
10. առարկայի դասավանդման մոտեցումները և մեթոդները:

Առարկայի նպատակը և խնդիրները նկարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ առարկայի դերը և առանձնահատկությունները տվյալ մասնագիտությամբ մասնագետ պատրաստելու և մասնագիտական հմտությունների ու կարողությունների ձևավորման գործում:

Առարկայի նպատակից բխող խնդիրները պետք է ցույց տան, թե ինչ կրթական գործիքների միջոցով է իրականացվում նպատակը: Խնդիրները ձևակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել դասընթացի ավարտին ձեռք բերվող ունակությունները, որոնցով պայմանավորված է տվյալ դասընթացի բովանդակությունը և յուրացումը (կետ 3): Եթե առարկան ուղղված է ունակությունների լայն տիրույթի ձեռքբերմանը, ապա նպատակահարմար է խմբավորել նրանց ըստ կրթական որոշակի խնդիրների (գիտելիքներ, հմտություններ, կարողություններ):

Ելնելով տվյալ մասնագիտության մեջ առարկայի նշանակությունից, նպատակահարմար է խմբավորել ձեռք բերվող արդյունքները(փոքր ծավալի առարկաների համար մինչև հինգ ունակություն, մեծ ծավալովների համար` հինգ և ավելին):

Խնդիրներն ձևակերպելիս նպատակահարմար է օգտագործել այնպիսի բառեր, ինչպիսին են <<հասկանալ>>, <<իմանալ>>, <<ուսումնասիրել>>, <<կարողանալ>>:

Նշված ձևակերպումը թույլ է տալիս հստակեցնել սահմանվող կոմպետենտությունները:

Երկրորդ բաժինը ներառում է՝

- Դասընթացի կարգավիճակի նկարագրությունը ըստ մասնագիտության: Անհրաժեշտ է նշել, թե տվյալ առարկան ուսումնական պլանի որ կրթաբլոկին է պատկանում (հումանիտար, սոցիալ-տնտեսական, բնագիտա-մաթեմատիկական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական):
- Դասընթացի դերը տվյալ մասնագիտության բակալավր պատրաստելիս:

Առարկայի այլ դասընթացների հետ տրամաբանական և բովանդակային փոխկապակցվածությունը շարադրելիս անհրաժեշտ է թվարկել այն դասընթացները, որոնք մասնագիտության ուսումնական պլանի կառուցվածքում տվյալ առարկայի ուսումնասիրման համար հանդիսանում են <<նախորդներ>> բովանդակության և մասնագիտական ունակությունների ձեռք բերման առումով: Առաջին կուրսում դասավանդվող որոշ առարկաների համար նպատակահարմար է նշել նրանց կապը դպրոցի ավագ դասարաններում ուսումնասիրվող առարկաների հետ:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է թվարկել <<մուտքային>> պահանջները՝

- նախնական գիտելիքներ,
- նախնական կարողություններ,
- ուսանողի անձնական որակավորումները տվյալ առարկան ուսումնասիրելու համար՝ <<նախորդ>> դասընթացների ուսումնասիրության արդյունքում ձևավորված ունակությունների հիման վրա (<<իմանալ>>, <<հասկանալ>>, <<պատկերացում ունենալ>>, <<կարողանալ>>, <<տիրապետել>> և այլն):

Վերջին քայլով անհրաժեշտ է թվարկել այլ դասընթացները և պրակտիկաները, որոնց համար տվյալ առարկան հանդիսանում է <<նախորդող>>:

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել, թե տվյալ դասընթացը որ առարկաների հետ է զուգահեռ ուսունասիրվում նույն կիսամյակում:

Դասընթացի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջները.

- Նշվում են առարկայի յուրացման արդյունքում ուսանողի կողմից ձեռք բերված բոլոր ունակությունները: Անհրաժեշտ է ձևակերպել տվյալ առարկայի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջները (առարկայի ուսումնասիրության վերջում ուսանողը պետք է իմանա, կարողանա, տիրապետի):

Առարկայի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջների ձևակերպումը ամբողջ ծրագրի գլխավոր բաղադրիչն է: Մի կողմից այն անրադառնում է առարկայի նպատակին և խնդիրներին, մյուս կողմից՝ կանխորոշում է ուսումնական գործընթացում օգտագործվող կրթական տեխնոլոգիաները, դասընթացների տեսակները, ընթացիկ ստուգումները և ատեստավորման ձևերը:

Առարկայի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջներն ձևակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

- Առարկայի իմացության արդյունքները պետք է համապատասխանեն առարկայի նշանակությանը տվյալ մասնագիտությամբ մասնագետներ պատրաստելու գործընթացում և պատասխանեն <<գիտենալ>>, <<կարողանալ>>, <<տիրապետել>> հարցերին:

- Դասընթացի յուրաքանչյուր խնդիր պետք է արտացոլվի ուսումնառության արդյունքների պահանջներում:
- Դասընթացի արդյունքների վրա դրվող պահանջները չպետք է լինեն ավելցուկային, այլ հստակ ձևակերպված լինեն՝ ըստ Որակավորման ազգային շրջանակների (ՈԱՇ) պահանջների, ինչպես նաև պետք է համապատասխանեն ուսումնական աշխատանքների պլանավորված տեսակներին և օգտագործվող կրթական տեխնոլոգիաներին:
- Դասընթացի ուսումնասիրման նկատմամբ դրվող պահանջները պետք է լինեն ստուգելի՝ ուսումնական պլանում և առարկայական ծրագրում նախատեսված ստուգման և ատեստավորման ձևերի միջոցով:

Դասընթացի ծավալն և ուսումնական աշխատանքի տեսակները ներկայացվում են էլնելով դասընթացի համար նախատեսված ժամաքանակից, հաշվի առնելով հատկացվող կրեդիտները և դրա բաղադրիչները:

Դասընթացին հատկացվող ժամաքանակը (դասախոսություն, լաբորատոր, ինքնուրույն աշխատանք և այլն) նախատեսվում է մասնագիտության ուսումնական պլանում, որին համապատասխան պետք է կազմվի դասընթացի ծրագիրը:

<Լաբորատոր պարապմունքներ> բաժնում (եթե այն պլանավորված է ըստ ուսումնական պլանի) նշվում են լաբորատոր աշխատանքների թեմաները և ժամաքանակը:

<Կուրսային նախագծեր> բաժնում (եթե այն պլանավորված է) բերվում են ամբիոնի կողմից հաստատված նախագծերի (աշխատանքների) ցուցակը:

Առարկայի ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովումը ներառում է՝

- Հիմնական և լրացուցիչ գրականություն,
- Գրականության էլեկտրոնային բազա և այլն:

Հիմնական գրականության ցանկը ներառում է ուսումնական գրականություն, որն անհրաժեշտ և բավարար է առարկայի հիմնական բովանդակությունը ուսանողի կողմից յուրացման համար:

Լրացուցիչ գրականությունը թույլ է տալիս ավելի լայն ուսումնասիրել տվյալ առարկան:

Գրականության էլեկտրոնային բազայի միջոցով (<http://library.anau.am/>) ուսանողը կարող է գտնել բուհում հրատարակված գրականության և ուսումնամեթոդական ցուցումների էլեկտրոնային տարբերակները:

Առարկայի դասավանդման նյութատեխնիկական ապահովումը: Տվյալ բաժնում պետք է ներկայացվեն այլ միջոցները, որոնք օգտագործվում են դասավանդման ժամանակ (սարքեր, փորձանմուշներ, համակարգչային տեխնիկա, փորձարարական և ցուցադրական նյութեր):

Առարկայի դասավանդման ձևերը և մեթոդները: Տվյալ բաժինը ներառում է ուսումնական գործընթացում պարապմունքների ձևերը և մեթոդները: Յուրաքանչյուր առարկայի համար ամբիոնը պետք է նշի այն դասավանդման մեթոդները, որոնք կիրառելի են տվյալ դասընթացի համար:

2. Ուսումնական աշխատանքների տեսակները

Դասախոսությունը դասընթացի կազմակերպման ձև է, որը նախատեսված է բանավոր ձևով մեծ ծավալի ուսումնական նյութի համակարգված և հաջորդական ներկայացման համար:

Մեմինարը դասընթացի կազմակերպման ձև է, որի շրջանակներում գիտակրթական խնդիրների քննարկման ընթացքում տեղի է ունենում ուսանողի կողմից տեսական նյութի յուրացում: Ընդ որում ուսանողի մոտ ձևավորվում է սեփական տեսակետ առարկայի և նրա մեջ մտնող թեմաների վերաբերյալ:

Գործնական պարապմունքները առարկայի ուսուցման ձև է, որն ուղղված է ուսանողի մոտ կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Ինքնուրույն աշխատանքը արտալսարանային ուսումնական գործընթաց է, որն ուղղված է ուսանողի պատրաստվածությանը դասախոսությանը, գործնական պարապմունքներին և սեմինարներին, ուսումնահետազոտական նախագծերի և կուրսային աշխատանքների կատարմանը, ինչպես նաև այլ ուսումնական առաջադրանքների կատարմանը:

Անհատական աշխատանքը լսարանային նյութի լրացումն է ռեֆերատների, կուրսային նախագծերի (աշխատանքների), զեկուցումների, ուսումնահետազոտական աշխատանքների տեսքով:

3. Կրթական տեխնոլոգիաներ

Կրթական տեխնոլոգիաները կրթական գործընթացի սուբյեկտների փոխկապակցվածության համակարգ է, որն ուղղված է ուսումնական գործընթացում որոշակի խնդիրների լուծմանը և ուսուցման պլանավորված արդյունքների հասնելուն:

Դասական (ավանդական) տեխնոլոգիաները կրթական գործընթացի կազմակերպումն է, որը ենթադրում է գիտելիքների փոխանցումը դասախոսից ուսանողին (հիմնականում բացատրական մեթոդների հիման վրա): Ուսանողի ուսումնական գործունեությունը այդպիսի պայմաններում կրում է վերարտադրողական բնույթ:

Դասական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական պարապմունքների ձևերի օրինակ են հանդիսանում՝

- *Տեղեկատվական դասախոսություն*՝ դասընթացի մեջ ներառված նյութի հաջորդական ներկայացում (միայն դասախոսն է խոսում):
- *Ակնարկային դասախոսություն*՝ նյութի ներկայացում, որի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդանրացված պատկերացում դասընթացի բաժինների կամ թեմաների վերաբերյալ:
- *Մեմինար-գրույց (էվրիստիկ գրույց)*՝ ուսանողների կողմից թեմաների պատրաստում և զեկուցում՝ առաջարկվող հիմնական և լրացուցիչ գրականության հիման վրա:
- *Գործնական աշխատանք վարժանքի ձևով*՝ պարապմունք, որն ուղղված է կոնկրետ կարողությունների և հմտությունների ձեռք բերմանը:
- *Լաբորատոր աշխատանք*՝ ուսումնական աշխատանքի կազմակերպում ռեալ նյութերի և ինֆորմացիոն օբյեկտների հետ, փորձերի կատարում:

- *Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաներ*՝ կրթական գործընթացի կազմակերպում, որն ենթադրում է պրոբլեմային հարցադրումներ, ուսումնական պրոբլեմային իրավիճակների ստեղծում՝ ուսանողների ուսումնական գործունեության խթանման համար:
- *Խաղային տեխնոլոգիաներ*՝ կրթական գործընթացի կազմակերպում, որի ժամանակ դասախոսը շփվում է ուսանողների հետ խաղի տեսքով՝ առաջարկվող սցենարային պայմանների շրջանակներում:
- *Ինտերակտիվ տեխնոլոգիաներ*՝ կրթական գործընթացի կազմակերպումն է, որը ենթադրում է բոլոր մասնակիցների ակտիվ մասնակցություն: Ինտերակտիվությունը ենթադրում է ակտիվ գրույցի կազմակերպումը դասախոսի և ուսանողների միջև: Ինտերակտիվ տեխնոլոգիաների միջոցով ուսումնական պարապմունքների ձևերի օրինակներ են՝
 - o *<Հետադարձ կապի> դասախոսություն*՝ նյութի (թեմայի) ներկայացում նախապես պլանավորված սխալներով, դասախոսություն-գրույց, դասախոսություն-բանավեճ:
 - o *Սեմինար-բանավեճ*՝ որոշակի հարցի կամ խնդրի շուրջ կոլեկտիվ քննարկում և խմբում կարծիքների բացահայտում:
- *Տեղեկատվա-կոմունիկացիոն տեխնոլոգիաներ*՝ կրթական գործընթացի կազմակերպում, որը հիմնված է տեղեկատվության հետ աշխատանքի ծրագրային և տեխնիկական միջոցների կիրառման վրա: Տեղեկատվա-կոմունիկացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական պարապմունքների ձևերի օրինակներն են՝
 - o *Դասախոսություն ցուցադրման միջոցով*՝ նյութի բովանդակության ներկայացումը զուգորդվում է ուսումնական նյութերի ցուցադրմամբ (գրաֆիկական, աուդիո, վիդեո նյութեր և այլն):
 - o *Գործնական պարապմունք շնորհանդեսների ձևով*՝ դասընթացի թեմայի ներկայացում մասնագիտական ծրագրային միջոցների կիրառմամբ:

4. Ընթացիկ ստուգման և ատեստավորման ձևեր

Ընթացիկ ստուգումը ուսանողների կողմից գիտելիքների և կարողությունների ընկալման մակարդակի անընդհատ ստուգումն է դասախոսությունների, գործնական պարապմունքների, ինքնուրույն աշխատանքի ժամանակ և այլն:

Ճիշտ կազմակերպվող ընթացիկ ստուգումները թույլ են տալիս հաստատել հետադարձ կապ ուսանողի հետ և ստուգել նրա ընկալման մակարդակը:

Ատեստավորումը ընդանրացնող ստուգում է՝ դասընթացի յուրացման արդյունքների հիման վրա, որը իրականանում է ստուգարքի կամ քննության տեսքով:

Ընթացիկ և վերջնական ստուգումների ձևերն են՝

- անհատական և խմբակային առաջադրանքների կատարում սեմինարների և գործնական պարապմունքների ընթացքում,
- ստուգողական աշխատանքների կատարում,
- ռեֆերատների պատրաստում,

- հանձնարարված ընթացիկ նյութերի պատրաստում,
- հարցումներ (բանավոր կամ գրավոր),
- թեստավորում,
- կոլոքվիում,
- ստուգարք,
- քննություն,
- անհատական հարցազրույց:

5. Դասավանդման և ուսումնառության մեթոդներ

Դասավանդման և ուսումնառության մեթոդները դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեության եղանակներ են, որոնք ուղղված են նրանց կողմից կրթական նպատակների նվաճմանը:

Յուրաքանչյուր առարկա ըստ իր առանձնահատկության պահանջում է դասավանդման և ուսումնառության տարբեր մեթոդների կիրառում:

Մտորել բերվում են առավել կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները: Յուրաքանչյուր առարկայի համար անհրաժեշտ է ըստ դասընթացի ձևի (դասախոսություն, լաբորատոր/գործնական, սեմինար) և նշված թեմաների ընտրել համապատասխան դասավանդման մեթոդը:

Դասավանդման մեթոդներ

1. Տեսական նյութի բացատրություն,
2. Զրույց,
3. Երկխոսություն,
4. Լաբորատոր աշխատանքի բացատրություն,
5. Ցուցադրական նյութերի ներկայացում և բացատրություն,
6. Մասնագիտական փորձերի անցկացում,
7. Թեմայի շուրջ խաղերի կազմակերպում,
8. Քննարկումներ,
9. Նյութի բացատրություն տարբեր ցուցադրական նյութերի կիրառմամբ (համակարգչային ցուցադրում, ցուցանմուշներ, պաստառներ և այլն):

Ուսումնառության մեթոդներ

1. Ռեֆերատների պատրաստում և ներկայացում,
2. Ուսումնամեթոդական գրականության օգտագործում,
3. Կուրսային աշխատանքների պատրաստում և ներկայացում,
4. Մասնակցությունը պրակտիկաներին և հաշվետվությունների պատրաստում,
5. Մասնակցությունը լաբորատոր փորձերին,
6. Լաբորատոր /գործնական խնդիրների լուծում,
7. Լաբորատոր փորձի խմբակային կատարում,
8. Նյութերի պատրաստում և զեկուցում, մասնակցությունը քննարկումներին
9. Հաշվարկագրաֆիկական աշխատանքների կատարում:

Առարկայական ուսումնական ծրագրի կազմման ձևաչափ

Տիտղոսաթերթ

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
Հայաստանի ազգային ազրարային համալսարան

_____ ֆակուլտետ
_____ ամբիոն

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Առարկայի անվանումը _____

Մասնագիտություններ _____

Առարկայի ամբողջական անվանումը _____

Դասընթացի ընդհանուր ժամաքանակը _____

Դասընթացի ժամաքանակը ըստ կիսամյակների (կիսամյակ _____ ժամաքանակ _____)

Դասընթացի ընդհանուր կրեդիտների թիվը _____

Դասընթացի կրեդիտները ըստ կիսամյակների _____ (կիսամյակ _____ ժամաքանակ)

Պարապմունքի ձևերը. Դասընթացի ուսումնասիրություն իրականացվում է դասախոսության, լաբորատոր, գործնական և այլ պարապմունքների ձևով:

Առարկայի նպատակը. Հստակ նշվում են առարկայի նպատակները:

Առարկայի խնդիրները. Հստակ նշվում են առարկայի նպատակներից բխող խնդիրները:

Առարկայի տեղն ու դերը մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքում. Նշվում է կրթական ծրագրում առարկայի տեղը համապատասխան կրթաբլոկում (հումանիտար, սոցիալ-տնտեսական, բնագիտա-մաթեմատիկական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական):

Մահմանվում են՝

- *առարկայի ուսումնասիրության համար անհրաժեշտ նախնական գիտելիքները և կարողությունները, անցած առարկաների ցուցակը:*

Առարկայի ուսումնառության արդյունքում ակնկալվող արդյունքները.

Առարկայի ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա՝

- Գիտելիքներ (իմանա)
- Հմտություններ (տիրապետի)
- Կարողություններ (կարողանա):

Դասընթացի տեսական թեմաները.

- Թեմա 1. _____ - ժամ
- Թեմա 2. _____ - ժամ
- Թեմա 3. _____ - ժամ

Լաբորատոր աշխատանքերի թեմաները.

- Թեմա 1. _____ - ժամ
- Թեմա 2. _____ - ժամ
- Թեմա 3. _____ - ժամ

Կուրսային աշխատանքների թեմաները.

- Թեմա 1. _____ - ժամ
- Թեմա 2. _____ - ժամ
- Թեմա 3. _____ - ժամ

Ինքնուրույն և անհատական աշխատանքների թեմաները.

- Թեմա 1. _____ - ժամ
- Թեմա 2. _____ - ժամ
- Թեմա 3. _____ - ժամ

Առաջարկվող գրականություն.

- Հիմնական
- Լրացուցիչ
- Էլեկտրոնային

Գնահատման սկզբունքը և տոկոսները ըստ գործոնների (ըստ առարկայի համար նախատեսված բաղադրիչների)

Հաճախումներ	%
Ակտիվություն	%
Անհատական և ինքնուրույն աշխատանքներ	%
Կուրսային նախագիծ	%
Միջանկյալ քննություն	%
Վերջնական քննություն	%

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ. Նշվում են տվյալ առարկայի համար կիրառելի և օգտագործվող դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Գնահատման համակարգ

Գնահատման մեթոդներ (բանավոր, գրավոր, թեսթ).

Գնահատման սանդղակ.

<i>Գնահատականը 5 միավորային սանդղակով</i>	<i>Գնահատումը ECTS համակարգով</i>		<i>Ռեյտինգային միավորը</i>	<i>Գնահատումը 20 միավորային սանդղակով</i>
	<i>տատային</i>	<i>թվային</i>		
<i>Գերազանց</i>	<i>A+</i>	<i>4.0</i>	<i>95-100</i>	<i>20</i>
	<i>A</i>	<i>4.0</i>	<i>87-94</i>	<i>19</i>
	<i>A-</i>	<i>3.7</i>	<i>81-86</i>	<i>18</i>
<i>Լավ</i>	<i>B+</i>	<i>3.3</i>	<i>75-80</i>	<i>17</i>
	<i>B</i>	<i>3.0</i>	<i>67-74</i>	<i>15-16</i>
	<i>B-</i>	<i>2.7</i>	<i>61-66</i>	<i>14</i>
<i>Բավարար</i>	<i>C+</i>	<i>2.3</i>	<i>55-60</i>	<i>13</i>
	<i>C</i>	<i>2.0</i>	<i>46-54</i>	<i>9-12</i>
	<i>C-</i>	<i>1.7</i>	<i>40-45</i>	<i>8</i>
<i>Անբավարար</i>	<i>D</i>	<i>1.0</i>	<i>0-39</i>	<i>-</i>
<i>Չներկայացած (անավարտ)</i>	<i>F</i>	<i>0</i>	<i>-</i>	<i>-</i>
<i>Ստուգված</i>	<i>S</i>	<i>-</i>	<i>≥ 40</i>	<i>-</i>
<i>Չստուգված</i>	<i>U</i>	<i>-</i>	<i><40</i>	<i>-</i>

Առարկայի դասավանդման համար նյութատեխնիկական բազա. Օգտագործվող ռեսուրսները դասախոսության, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամանակ:

Լրացուցիչ խորհրդատվություն. Խորհրդատվության նպատակը տվյալ առարկայի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Մակարդակը	Որակավորումները	Բնութագրիչները		
		գիտելիքներ	հմտություններ	կարողություններ
1	2	3	4	5
6-րդ	Բակալավր	<p>մասնագիտական աշխատանքի կամ ուսման կրնկրետ ընագավառին առնչվող մասնագիտական, տեսական և գործնական խոր գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են տեսությունների ու սկզբունքների համընդգրկուն ըմբռնման, դրանց քննադատական գնահատման ու կատարելագործման, տվյալ մասնագիտական ոլորտում առկա դպրոցների, ուսմունքների, գիտաճյուղերի և ուղղությունների մասին իրազեկվածության, դրանց համեմատության և գործնական կիրառության համար</p>	<p>վարպետության և նորարարության մասին վկայող առաջանցիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ մասնագիտական ուսման որևէ ընագավառում քարդ և անկանխատեսելի խնդիրներ լուծելու, քարդ ու համալիր տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու և գնահատելու, պահանջվող ունակություններն ընտրելու, զարգացնելու և հարմարեցնելու, մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդները կատարելագործելու և դրանց արդյունավետությունը գնահատելու համար</p> <p>համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում</p>	<p>պատասխանատվության ստանձնում աշխատանքի և ուսման այն գործընթացների կազմակերպման ու կատարման համար, որոնք կարող են հանգեցնել միջավայրի զգալի փոփոխությունների կամ զարգացման նախաձեռնության ցուցաբերում. որոշումներ ընդունելու ունակության դրսևորում նմանօրինակ գործողությունների իրականացման ընթացքում. աշխատանքի և ուսման գործընթացներում մյուս աշխատողների դերի որոշում. այդ գործընթացների և անհատների ու խմբերի շրջանում արհեստավարժության զարգացման համար պատասխանատվության ստանձնում. ինքնուրույնության դրսևորում աշխատանքի և ուսման ընթացքում. մասնակցություն նյութական պաշարների պլանավորման ու բաշխման գործընթացին</p> <p>Օտար լեզվով կարող է կազմել հստակ տեքստ մասնագիտական թեմայի վերաբերյալ: Կարող է քննարկել իր մասնագիտության տեխնիկական մանրամասները, ներկայացնել կարծիք և իր նպատակները:</p>

1	2	3	4	5
7-րդ	Մագիստրոս	<p>մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ ընագավառին առնչվող մասնագիտացված, արդիական, գործնական և տեսական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են այդ մասնագիտական ոլորտում նոր հայեցակարգերի և սկզբունքների մշակման, ինչպես նաև տվյալ ոլորտի շրջանակներում կամ միջառարկայական տիրույթում առանցքային նշանակություն ունեցող գիտելիքների մասին տվյալների ու տեղեկությունների հավաքման համար</p>	<p>մասնագիտացված հմտություններ, որոնք անհրաժեշտ են ընտադատական վերլուծությունների, բարդ և համալիր տեղեկատվության գնահատման ու մեկնաբանման, մասնագիտացման ոլորտի մյուս ճյուղերից վերցված գիտելիքների ինտեգրման, հետագա հետազոտական աշխատանքների կատարման և այդ գործընթացի ժամանակ բարդ խնդիրների լուծման, տվյալ ոլորտում նորարարության, նոր գիտելիքների ու ընթացակարգերի մշակման, պահանջվող մեթոդների ու մոտեցումների ընտրության և մասնագիտացման ոլորտում անցկացված գործողությունների երկարաժամկետ ու կարճաժամկետ արդյունքների գնահատման համար.</p> <p>համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում</p>	<p>էական փոփոխությունների և զարգացումների հանգեցնող գործընթացների մշակման ու պլանավորման համար պատասխանատվության ստանձնում, բարձր ինքնուրույնություն, բարդ և համալիր գործընթացների ու առաջադրանքների նախաձեռնում և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն, պատասխանատվություն նոր մեթոդների ներդրման ու մասնագիտական ասպարեզում զարգացման համար, մյուս աշխատողների կատարած աշխատանքի նկատմամբ վերահսկողություն ու նրանց առաջադիմության գնահատում, նրանց մասնագիտական ուսուցման և վերապատրաստման պլանավորում ու կազմակերպում, ուղղակի մասնակցություն նյութական պաշարների պլանավորմանն ու բաշխմանը.</p> <p>Օտար լեզվով կարող է կազմել հստակ, լավ կառուցված տեքստ մասնագիտական թեմայի վերաբերյալ, նկարագրել իր փորձն ու իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և նպատակների հիմնավորումները:</p>

1	2	3	4	5
8-րդ	Հետազոտող (գիտական աստիճանը՝ գիտությունների թեկնածու)	կոնկրետ րնագավառին առնչվող առավել խոր և առաջանցիկ գիտելիքներ մասնագիտական ոլորտի և մյուս րնագավառների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են գիտահետազոտական աշխատանքի վրա հիմնված նոր հայեցակարգերի, սկզբունքների և տեսությունների մշակման համար, այդ թվում՝ գիտելիքներ, որոնք կապահովեն համակարգային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հնունություններ ու կարողություններ, հայտնի ծրագրային փաթեթների՝ գործնական և ազատ տիրապետում	մասնագիտական հնունություններ, որոնք անհրաժեշտ են գիտահետազոտական աշխատանք կատարելու նպատակով զանազան բարդ գործոնների փոխազդեցության հետ կապված վճռորոշ խնդիրներ լուծելու, այդ աշխատանքի վրա հիմնված նոր սկզբունքներ և տեսություններ մշակելու, գիտելիքները և մասնագիտական փորձն ընդլայնելու և վերախմաստավորելու տվյալ և այլ մասնագիտական րնագավառների սահմանագծում.	մասնագիտական ոլորտին վերաբերող գիտելիքների և փորձի ասպարեզում էական փոփոխությունների հանգեցնող գործողությունների ծրագրում և կազմակերպում, աշխատանքային գործունեության ընթացքում բարձր ինքնուրույնություն ապահովելու, մասնագիտական ոլորտում բարձր հեղինակություն վայելելու, մյուս աշխատողներին ղեկավարելու և ուղղորդելու, նոր գիտելիքների ու մեթոդների տարածումը կազմակերպելու, նյութական պաշարներն
			հետագա լուծումներ մշակելու և իրականացնելու, նոր մեթոդներ ու մոտեցումներ մշակելու, մասնագիտական և հարակից ոլորտների շրջանակներում հետանկարային ու կարճաժամկետ գործողությունների արդյունքները գնահատելու ունակություն	ինքնուրույնաբար ծրագրելու և րաշխելու կարողություն. Օտար լեզվով կարող է կազմել հստակ լավ կառուցված տեքստ մասնագիտական, սոցիալական և ակադեմիական թեմաների վերաբերյալ, նկարագրել իր փորձն ու իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և նպատակների հիմնավորումները: